


Վայացավ քաղաքացիների հունիս ամսվա ընդունելությունը

14.06.2016



2016 թվականի հունիսի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության համար ցուցակագրվել էր 94 քաղաքացի, ընդունելության էին եկել 98-ը: Ընդունելության եկած 94 քաղաքացիներ դիմել էին դրամական աջակցության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: Երկու քաղաքացի դիմել էր բուժսպասարկման պետական պատվերից օգտվելու, 1 քաղաքացի՝ տան վթարայնության, 1 քաղաքացի՝ հողհատկացման հարցերով:

Հանձնարարություն տրվեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին՝ ուսումնասիրել և օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիներին: